ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 520 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 892-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի նոյեմբերի 4-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 892-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2024 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 196/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Շիին Շողիկ» ճամբարում շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,184,622 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2024 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 197/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Շիին

Շողիկ» ճամբարում շինարարական աշխատանքների իրականացում՝ 5,706,602 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2024 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 198/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Շիին Շողիկ» ճամբարում շինարարական աշխատանքների իրականացում՝ 7,258,306 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Կանակա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06901369) 2024 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 199/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Շիին Շողիկ» ճամբարում շինարարական աշխատանքների իրականացում՝ 12,550,660 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

29.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ